

ՊԱՇՏՈՒՄԻՆԱԿԱՆՈՒՄՆԵՐ

ԱՐՏԱԿ ԳՆՈՒՆԻ

ՆԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍԵՒՄՆԻ ԹԵՐԱԿՂՁՈՒՄ

Սևանի թերակղզին եւ նրան անմիջականորեն հարող տարածաշրջանի աչքի են ընկնում հնագույն եւ միջնադարյան հուշարձաններով: Այսպէղ են գտնվում այնպիսի հանգուցային հուշարձաններ, ինչպիսիք Լճաշեն եւ Մեծփի ամրոցներն են: Նուագիտական կայտն այս տարածաշրջանի մշակութային զարգացումը արձանագրում է սկսած Բ. ա. Դ-Գ. հազարամյակից մինչեւ միջնադար¹: Սևանի կղզին (թերակղզին) եւս հանդիսացել է հայ մշակույթի կենտրոններից մէկը: Այսպէղ տեղադրված վանական համալիրն իրավամբ համարվում է հայ ճարտարապետության հայակապ կոնշերից մէկը:

Սևանի վանական համալիրը բաղկացած է երեք եկեղեցիներից: Նրանցից երկուսը՝ հարավարևելյան լոռնայանջին կառուցված Ս. Ասրվաճաճին եւ Սրբ. Առաքելոց եկեղեցիները, կառուցվել են 874 թ. Մաշտոց Եղիվարդեցու եւ Սյունյաց Մարիամ իշխանուհու կողմից, ինչի մասին են վկայում Մարիամ իշխանուհու շինարարական արձանագրությունը Սրբ. Առաքելոց եկեղեցու թմբուկի արևելյան նիստին եւ Սրբեփանոս Օրբելյանի համապատասխան հիշարակությունը: Սրբ. Առաքելոց եկեղեցու կառուցման մասին Սրբեփանոս Օրբելյանը հիշում է մի ավանդություն, ըստ որի՝ Մաշտոց Եղիվարդեցուն եկեղեցու կառուցման վայրը երազի մեջ ցույց են տվել փաստերկու առաքյալները, որոնք, լծի վրայով քայլելով, հասել են կղզի²: Նադականշական է ետև Ս. Ասրվաճաճին եկեղեցու արևմտյան կողմում կառուցված գավիթը, որը հայտնի է վայրե սյունների փորագիր վայրդյա խոյակներով³: Ս. Ասրվաճաճին եւ Սրբ. Առաքելոց եկեղեցիները, որ Սյունիթի ճարտարապետական դպրոցի վառ կոնշերից են, իրենց հարակազմային ձևերով եւ ծավալարարաճական լուծումներով վերարտադրում են վաղ միջնադարում մշակված եռաբսիղ կենտրոնազմբեր փոքր տաճարների տեսակը: Երկու եկեղեցիներն էլ դրսից եւ ներսից ունեն խաչաձև տեսք: Եկեղեցիները կառուցված են կուպրապաշ քարերից: Սրբապաշ քարերն օգտագործվել են միայն առավել կարևոր մասերում: Եկեղեցիների կառուցման ժամանակ կիրառվել են մի շարք եռը մեթոդներ: Երրորդ եկեղեցին Ս. Նարություն եկեղեցին է, որն, ի տարբերություն նախորդ երկուսի,

1 Ն. Մնացականյան, Լճաշենի կայտնական մշակույթի զարգացման հիմնական էրապները, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, հ. 2, էջ 95-97. Գ. Միքայելյան, Սևանի ավազանի կենտրոնական ամրոցները, «Տայտարանի հնագիտական հուշարձանները», հ. 1, Եր., 1968, էջ 13-18:

2 Լ. Մելիքետ-Բեկ, Ուոտկրդդադ նաճիսն նա Տեւան օր 874 ր., «Պադադի աադեդադա Մ. Յ. Մարթա», Մ.-Ղ., 1938, էջ 413. Ս. Մնացականյան, Տայրական ճարտարապետության Սյունիթի դպրոցը, Եր., 1960, էջ 27-29. Սրբեփանոս Օրբելյան, Սյունիթի պատմություն, Եր., 1986, էջ 175-176:

3 Ս. Մնացականյան, Էջլ. աշխ., էջ 37. Ե. Լարյան, Սևան, «Ազգագրական հանդես», գիրք XXVII, հ. 1, Թիֆլիս, 1908, էջ 74:

գմբեթածածկ սրահի տեսք է ունեցել: Վ. Նարոթյունյանն այս կառույցը համաժամանակյա է համարում առաջին երկուսին, իսկ Ս. Մուսգակաևյանը նրա կառուցումը վերագրում է Մարգիս կաթողիկոս Սևանցուն (992-1019)⁴:

Վանական համալիրն իր մեջ հերառում էր մի շարք փարաժամանակյա շինություններ՝ վանահոր կացարան, ուխտավորների համար նախատեսված սենյակներ, խցեր, արքայադրական կառույցներ, որոնք այս կամ այն չափով պահպանվել էին մինչև Ի դարի սկզբները⁵: Կղզու արևելյան հատվածում հիշարակվում են «Մաշտոցներ» անվանվող խցիկները, որտեղ, ըստ ավանդության, ճգնել է Մաշտոց Նայրապետը⁶:

Անական է, որ գրեթե բոլոր հարկերը ռազմավարական ճանապարհի անմիջական հարևանությամբ՝ վանական համալիրն իր գոյության ողջ ընթացքում արքայադրական խոշոր կենտրոն է եղել⁷: Կղզու արքայադրական կենտրոն լինելու մասին են վկայում ոչ միայն մատենագրական փյույակները, այլև 2008 թ. շինարարական աշխատանքների ժամանակ պարանախանություն հայտնաբերված ձիթհանի բարը⁸:

Գրեթե բոլոր ռազմավարական կարևոր հանգույցում՝ Սևանի կղզին հաճախ կարևոր դեր է խաղացել հայ ժողովրդի պայքարի մեջ, ուստի եւ բազմիցս հիշարակվում է մատենագրական աղբյուրներում: Սևանա կղզու ամրոցը, փաստորեն, հանդիսացել է մի մեծ պաշտպանական գոտու կենտրոն, որն իր մեջ ընդգրկել է ինչպես բուն կղզու ամրությունները, նույնպես եւ առափնյա մի շարք ամրոցներ⁹: Յավոթ, Սևանա կղզու կառույցների պաշտպանական գործառնությունների կամ հերթափոխման շրջանում նրա խաղացած դերի մասին նյութի պատկերացում կարող ենք ունենալ մեծ մասամբ միայն գրավոր աղբյուրներից: Օրինակ՝ Մ. Սմբարյանցը նշում է, որ կղզու արևմտյան ափին՝ ջրի մեջ, կրկնում են պարիսպների մնացորդները¹⁰:

* * *

2009 թ. Սևանի Վազգենյան հոգեհոր դպրանոցի հարավային պարսպի կառուցման ժամանակ բացվեց արևելք-արևմուտք ուղղվածությամբ մի պատ:

4 Կղզու տարածքի ճարտարապետարվեստ եւ հնագիտական հուշարձանները լրագրաց տրժտեսացել են հետազոտողների աշխատության ղեկավար ԿՆՆ ղ. առաջին բաժնոցում, կոչ վանքի ճգնավոր Մկրտչ Տիխոնցին բացել եւ մարդիկ է Ս. Նարոթյան փաճարի կիճերը: Այս մասին փնճ Մ. Միրաբեանց, Տեղագիր ծովագայտ Պալարանի գառախ, որ այժմ Նոր Բայազիդ, Վաղարշապատ, 1895, էջ 121: Եկեղեցական կառույցների եւ նրանց ճարտարապետության մասին փնճ Ս. Մուսգակաևյան, կղ. աշխ., էջ 27-42, Վ. Նարոթյունյան, Նայրապետ ճարտարության պատմություն, Եր., 1992, էջ 214-215. Ե. Լալայան, կղ. աշխ., էջ 72-75, 77-85. Ռ. Մ. Թոկարսկի, Архитектура Армении IV-XIV вв., Ե., 1961, էջ 227-229:

5 Ե. Լալայան, կղ. աշխ., էջ 74:

6 Լ. Ալիշան, Յուշիք հայրենեանց Նայոց, կտր. Ի, Վենետիկ, 1921, էջ 418. Մ. Միրաբեանց, կղ. աշխ., էջ 121:

7 Ն. Մանանդյան, Քին Նայտարանի գլխավոր ճանապարհները ըստ Պետրիկեյանի ըստ Պետրիկեյանի ըստ Պետրիկեյանի, Եր., 1936, էջ 179-189, նույնի, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ե., 1954, էջ 168. Մրենիանու Օրբեկյան, Սյունիքի պատմություն..., էջ 177-179, Մրենիանու Երենեանցի, Ջամբո, Եր., 2003, էջ 397, նաև ճանապարհությունը՝ էջ 525:

8 Մրենիանու Օրբեկյան, Սյունիքի պատմություն..., էջ 175-176:

9 Ս. Մուսգակաևյան, կղ. աշխ., էջ 198-199. Ն. Մանանդյան, կղ. աշխ., էջ 186, 189:

10 Մ. Միրաբեանց, կղ. աշխ., էջ 29, 110, հոնք. Ս. Մուսգակաևյան, կղ. աշխ., էջ 197-198: Ի դեպ, Մ. Միրաբեանցը նկատարում է, որ այս պարիսպների պետք է կառուցված լինեին ղեկավար Կղզու ճարտարապետական առաջ, առկայել փվյալ դեպքում եւ առաջնորդվում է ավելի շուտ փնճավ պարսպաշարի ըստերի մեծությամբ եւ ավանդությամբ:

Նույն փարի Վազգենյան դպրանոցի փրեսոյ հայր Գևորգ արեղա Սարոյանի երավերով մենք ուսումնասիրեցինք բացված փարածրը¹¹:

Այն գրելվում էր կղզու բրի ստորոտում՝ հին լճափին: Եփևարարական աշխատանքների ժամանակ կտրվել էր բրի կյուսիսային լանջի մի հատվածը՝ առաջացնելով մոտ 3 մ բարձրությամբ ուղղահայաց կտրվածք (նկ. 1): Վերջինիս վերևում լայն դարավանդ է: Եարքը բացվել է մոտ 12 մ երկարությամբ: Այն պահպանվել է 120-ից 230 սմ բարձրությամբ: Պարիսպը շարված է կոպտափայտ քարարկորներից եւ ունի բավականաչափ կանոնավոր փրեսք (նկ. 2), սակայն դեպի արևմուտք, մանավանդ պահպանված վերին հատվածում, այն ավելի կոպիտ է շարված, ընդ որում օգտագործված են փրեղի ժայռարկորները:

Պարի պահպանված մասից արևելք՝ կտրվածքի կենտրոնական հատվածում, հաստափայտաձև էր ուղղահայաց շարված չորս ժայռարկորներ (նկ. 3): Զի բացատրվում, որ սա որևէ շինության կամ թաղումային կառույցի պարի անկյունային հատված է: Նեղ այս հատվածում էլ նկատվում է հնագիտական կյուսի առավել մեծ կենտրոնացում: Այստեղ հողն այրված է, ունի շագանակագույն գունավորում, հագեցած է մարդու (միջկամարի Ֆալանգ) եւ անասունների ոսկորներով (այդ թվում՝ նաև այրված), խեցեղենի փարածամանակյա բեկորներով¹²: Այստեղ հայտնաբերված են երկու մեծ կարասների եւ մեկ թաղարի բեկորներ, ինչպես նաև մի քանի փոքր անոթների առանձին բեկորներ (նկ. 4):

Կարմիր կարասի իրանի բեկորները ուռուցիկ գարդանախիշերով են: Այս անոթն իր արտաքին փրեսքով եւ պարրասպման եղանակով նմանվում է մ. թ. Գ-Դ դդ. կյուսերին ու որոշակի գուգանոներ ունի Զաքարի բերդի եւ Եամիրամի կյուսերում¹³ (նկ. 5):

Տարբ կտրագող շուրթով կարմիր նուրբ թասի շրթնամասի բեկորը հայտնի է մ. թ. Գ-Դ դդ.¹⁴: Տարկանշական է, որ բեկորի կտրվածքները հարթեցված են: Ամենայն հավանականությամբ, արդեն ջարդվելուց հետո այն հայտնվել է ջրի մեջ:

Տայրնարևելիցին ավազախոտն կավից պարրասպված կոպիտ օքրայագույն կարասի շրթնամաս եւ իրանի հատված: Անոթի պսակը կտրվածքում ունի սեղանաձև փրեսք: Նմանափայ շուրթով կարասները հայտնի են ԺԲ-ԺԳ դդ. հուշարձաններից, օր.՝ Դվին, Եսկանդղի¹⁵ (նկ. 7):

Թեև շուրթով, կոպիտ նարուկով, կոպիտ ձևածնի թաղար: Իրանի վերին հատվածում իրար փակ գրելվող ալիքաձև երկու փորագիր գարդագոպիները իրարից, ինչպես նաև

11 Նյութերն ուսումնասիրվում են ԵՊՆ հնագիտության լաբորատորիայում: Նյութը վերլուծվիս հեղինակին անգնահատելի օգնություն են ցուցաբերել Բ. Ղարիբյանը, Ն. Նաիրյանը, Գ. Կարախանյանը, Բ. Կարապետյանը, Ն. Օհանյանը, Ն. Մելքոնյանը, Բ. Մկրտչյանը, Գ. Նավասարդյանը, որոնց հեղինակը հայտնում է իր խորին շնորհակալությունը:

12 Մարտարանական կյուսի բնորոշումը՝ Բ. Մկրտչյանի:

13 Ն. Օհանյան, Եամիրամի անտիկ ժամանակաշրջանի բնակավայրի պեղումները (1981-1987 թթ. պեղումներ). «Գանրեր Երևանի համալսարանի», 1989, հ. 2, էջ 208-209, Ե. Асатрян, Закарн берд, 2005, XVII 1, 2, А. Kalantaryan, G. Karakhanyan, H. Melkonyan, H. Petrosyan, N. Hakobyan, F. Babayan, A. Zhamkochyan, K. Nawasardyan, A. Harutunyan, Armenia in the cultural context of the East and West (ceramics and glass of the IV-XIV centuries), Yerevan, 2009, p. 48, խեցեղեն կյուսի կավի բաղադրության ուսումնասիրությունը կատարել է ԵՊՆ հնագիտության լաբորատորիայի աշխատակից Գ. Նավասարդյանը: Խեցեղենի չափագրությունը՝ ԱՊՊՊՊՊ:

14 Գ. Ղափաղարյան, Դվին թաղարը եւ նրա պեղումները, հապ. 1, Եր., 1952, էջ 185, А. Kalantaryan, G. Karakhanyan... էջվ. աշխ., աղ. 13 (3):

15 Shu A. Kalantaryan, G. Karakhanyan... էջվ. աշխ., աղ. 32 (2), Г. С. Есаян, Материальная культура бассейна р.Арго в раннем средневековье, Е., 1992, էջ 87, աղ. 27 (18):

անոթի վզից գալովում են փորագիր ակոսներով: Անոթի մակերեսը մուգ շագանակագույն է, խիստ մրուրված, ասպառը՝ կարմիր: Նմանարիպ անոթներ հայրենի են Նայասպանի բազմաթիվ հուշարձաններից: Դրանք հանդես են գալիս՝ սկսած Թ դարից և գոյաբերում մի քանի հարյուրամյակ¹⁶: Տարկ է նշել, որ սույն անոթի բազմաթիվ բեկորները, ի փարբերություն վերը ներկայացված խեցեղենի, խիստ մրուրված էին և նեթարկվել էին բարձր ջերմաստիճանի ազդեցության:

Բացի խեցեղենի վերուշյալ նմուշներից՝ կրթվածքի այս հարվածում հայրենաբերվեց Ք. ա. Ռ հազարամյակի րեսքի անոթի բեկոր: Այս բեկորը ծածկված էր կրային նստվածքներով, ինչը վկայում է յճի հարակում երկարատև մնալու մասին:

Առանձին գրածոներ հայրենաբերվեցին նաև կրթվածքի արևելյան հարվածից: Այսպես գրվեցին Ք.ա. Ա-Ռ դդ. անոթի բաց օքրայագույն հիմքի կարմիր ներկած անոթների երկու բեկոր (նկ. 6), ԺԴ-ԺԵ դդ. ջհարակած խեցու բեկոր՝ երկրորդական օգրագործման հետքերով (նկ. 9), ինչպես նաև անհասկանալի նշանակության երկաթյա իրի բեկոր: Նարկանշական է, որ իրը, նեթարկվելով չափազանց բարձր ջերմաստիճանի ներգործության, գրեթե հալվել էր: Իրի վրա դիտարկվում են հալված ապակու և խեցեղենի փշրանքներ¹⁷:

Անոթի խեցեղենի առկայությունը հուշարձանում պարահական չէ: Լճի ավազանի աշխույժ կերպով յուրացվել է Ք. ա. Ա և Ք.հ. Ա դդ.: Ավանդության համաձայն՝ այստեղ եղել է հեթանոսական սրբարևդի, որի րեղում Գրիգոր Լուսավորիչը կանգնեցրել է փայտյա խաչ¹⁸:

Մեռանի կղզու ամրոցը բազմիցս հիշարակվում է պարմական աղբյուրներում, նշվում է այդ կառույցի անառիկությունը և ամրությունը: Պարմիչներն այն անվանում են բերդ-կղզի, ինչից կարելի է հզրակացնել, որ ռոչ կղզին հազեցած էր փարբեր րեսակի ամրաշինական կառույցներով¹⁹: Է դ. կամ Ը դարի սկզբներին արարներին հաջողվեց գրավել ամրոցը միայն ևռամյա պաշարումից հետո, այն էլ երբ ևրանք յճից ջուր բաց թողեցին՝ պարանոց սրեղծելով ափի և կղզու միջին²⁰: Այս դիպվածը Մեռան կղզու գրավման առաջին վավերագրված դեպքն է²¹:

Նկարագ ժամանակաշրջանում Սևանա կղզին ավերածությունների է նեթարկվել ինչ-

16 Ա. Քալանթարյան, Ռոտոնավանքի խեցեղենը. «Լրաբեր հասարակարան գիտությունների», 1967, հ. 7, աղ. II (12), Ի. С. Есаян, նշվ. աշխ., էջ 53, 55, նշվ. աշխ., 84, 107, 109, նույնի «Մակարավանքի խեցեղենը», «Պարմուսանասիրական հանդես», հ. 1, 1983, էջ 226-227:

17 Երկաթյա իրի ուսումնասիրությունը՝ Ք. Լավատարյանի:

18 Մ. Մորաբյանց, նշվ. աշխ., էջ 110, Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 56, 68, Վ. Նարությունյան, նշվ. աշխ., էջ 215:

19 Մովսես Կաղանկարվացի, Պարմություն Աղվանից աշխարհի, Եր., 1969, էջ 248-249:

20 Կիրակոս Գանձակեցի, Նայոց պարմություն, Եր., 1982, էջ 58. «Մամուլի քստանայի Անեցոյ Տարածուկը ի գոց պարմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 85. Միխայրայ Արիվանեցոյ Պարմութիւն Նայոց, Մ., 1860, էջ 51. Միխայր Անեցի, Մարտան աշխարհալեպ հանդիսարանց, Եր., 1983, էջ 101. Տովհանես Գրոսիսանակերպոցի, Պարմություն Նայոց, Եր., 1996, էջ 96 (ի դեպ, Գրոսիսանակերպոցին նշում է, որ սա կղզին գրավելու երկրորդ փորձն էր, րեն անոյ):

21 Մովսես Կաղանկարվացին և Միխայր Արիվանեցին արշավանքը թվագրում են 696 թ. (րեն Մովսես Կաղանկարվացի, անոյ, Միխայր Արիվանեցի, անոյ), Առնոդը՝ 701 թ. (րեն «Պարմութիւն Անեցոյ մեծի Վարդապետի Նայոց», Մ. Պր., 1887, էջ 19-20), իսկ Մամուլի Անեցին՝ 703 թ. (Տիւ Սամուլի Անեցի, անոյ): Այս հարցի շուրջ րեն նաև՝ Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 60, Ս. Մեկիք-Բալաշյան, Նայասպանը V-IX դարերում, Եր., 1968, էջ 97-98:

պես թշնամիների կողմից, այնպես էլ բնական աղիությունների պարօճանակներով: 913 թ. Սահակ եւ Վասակ Սյունյաց իշխանները ապաստանում են Սևանա թերակամ, սակայն փախչում են այնպիսից: Արդյունքում ամբողջ գրավվում եւ թալանվում է արարների կողմից²²:

Ավանդության համաձայն՝ ՇԳ դարում, երբ փարաձառքյանը ենթարկվում էր լեզգի-ական ցեղերի ասպարակությունների, մի ավագակախումբ խորամանկությամբ փորձում է գաղտնի ներխուժել կղզի, սակայն հայտնաբերվում եւ ոչնչացվում է վանականների կողմից²³:

Նկարագա դարերում փարաձառքյանը թուլեպ ավերվում է, սակայն աղբյուրներում Սևանա կղզին չի հիշարակվում: Ըստ ՇԶ դարի անանուն ժամանակագրի՝ 1512 թ. Շահ Թահմազը «Գեղարքունու ծովն բանրել կար»²⁴:

ՇԷ դարում փարաձառքյանը ենթարկվում է ցալալիների ասպարակություններին, ինչի հետևանքով վանական համայնքը կորցնում է իր նշանակությունը մինչև 1620 թ. Կարապետ կախսկոպոսի վերականգնողական աշխատանքները²⁵:

Վերջապես, կղզում գրեթե կատարյալ ավերվեցին 1679 թ. երկրաշարժի ժամանակ, երբ «մինչ գի կանթեղաց ձև թն եւ ջուրն ի միասին եկաւ ի Աւվան կղզոյ յնկեղեցիս»:

Այսպեսով հանդերձ, հաշվի առնելով վերոհիշյալ այրված թաղարի թվագրումը, պարտիքի վերաշինությունների առկայությունը՝ կարելի է հստակապես ենթադրության հանգել, որ թերակղզու բլրի կարվածքի այրված հորիզոնն առաջացել է 913 թ. դեպքերի ժամանակ: Բնական է, որ միայն նկարագա համակարգված ուսումնասիրությունները կարող են հաստատել կամ հերքել այս վարկածը:

Ինչ վերաբերում է ՇԴ-ՇԷ դդ. ցնարակի գրամային, ապա արվյալ ժամանակաշրջանում Սևանի կղզին հանդիսանում էր գրչության կարևորագույն կենտրոններից մեկը՝ կոչվելով «սուրբ, առաքինեպ եւ անուանի»²⁶:

Անկասկած, հուշարձանի նկարագա ուսումնասիրությունները մեծապես կնայաստան ինչպես փարաձառքյանի հնագույն եւ միջնադարյան հուշարձանների բացահայտմանը, եւսինպես եւ լույս կսփռեն նայ ժողովրդի պարմության մի շարք հարցերի վրա:

22 Նովիանուս Գրասիանականացի, «Դարմություն...», էջ 230-232. Սերգիանոս Օրբելյան, Մյուխիքի սրբամայր, էջ 185-186. Մխիթար Անեցի, «Դարմութիւն քաղաքին Յանայ. Մխիթար Անեցի, Մարտան...», էջ 115-116. Մ. Չառչյանց, Նայոյ «Դարմության», Եր., 1984, հատր. 2, էջ 751-752: Ըստ Ե. Լալայանի՝ կղզում դեպքերը փռլի են ունեցել 911 թ. անմիջապես առաջ: Ի դեպ, նա հիշարակում է մի ավանդություն, ըստ որի Սահակ եւ Վասակ իշխանների մայր Մարիամը նկարագայում թաղվել է Սևանա կղզում. (Կեն Ե. Լալայան, էջվ. աշխ., էջ 60):

23 Մ. Սմբարյանց, էջվ. աշխ., էջ 151. Ե. Լալայան, անդ:

24 «Մանր ժամանակագրություններ», կազմ. Վ. Նակոբյան, հատր. 1, Եր., 1951, էջ 146:

25 Առաքել Գավրիիլեցի, «Դարմության», Եր., 1988, էջ 74-75, 201. Մ. Սմբարյանց, էջվ. աշխ., էջ 114. Մ. Զուլպյան, Ջալալիների շարժումը եւ նայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Եր., 1966, էջ 183. Ե. Լալայան, էջվ. աշխ., էջ 60:

26 «ՇԷ դարի հայերեն ձևագրերի հիշարակարաններ», կազմ. Լ. Խաչիկյան, մասն Գ., Եր., 1967, էջ 262, րկն նաեւ անդ, էջ 414, «ՇԷ դարի հայերեն ձևագրերի հիշարակարաններ», կազմ. Լ. Խաչիկյան, մասն Բ., Եր., 1958, էջ 5, 156, 396: